և արագ-արագ վազում է աջ ու ձախ, որպէս զի ամէն բանին հասնելու հնար ու միջոց ունենայ։ Այս դեռ ոչինչ է։ Սակայն անտանելին այն է, որ ընտանիքի տղամարդը լինի իւր ամուսինը, կամ նրա փոքր եղբայրը (տագրը) դաշտից տուն եկաւ թէ չէ, հարսը պարտաւոր է նրա ոտքերը լուանալ կոնքի մէջ սառը ջրով։ Նրա ձեռքերին ջուր լցնել և ձեռսրբիչ տալուց յետոյ կայծակի արագութեամբ վազել դէս ու դէն, որպէս զի նրա համար կերակուր և հաց բերի։ Ասուած մի՛ արասցէ, եթէ հարսը մի փոքր ուշ բերի կերակուրը, կամ բերած ափսէների շարքում յանկարծ աղը կամ պղպեղը մոռացած լինի և կամ հէնց մածնի, կամ կերակրի ու հացի մէջ մի մազ եբևայ, այն ժամանակ վա՛յն է եկել այն դժբախտ հարսի գլխին։ Տղամարդը կատաղի առիւծ է դառնում, գոռում, գոչում է խեղճ ու անօգնական հարսի վրայ, կարկտի պէս զզուելի հայհոյանքների հեղեղներ է թափում նրա հօրն ու մօր հասցէին։ Իսկ երբեմն էլ լինում են այնպիսի անհամբեր և կատաղի արարածներ, որոնք առանց երկար ու բարակ մտածելու, ինչ որ իրենց ձեռքն է ընկնում, լինի պղնձէ կամ հողէ աման, քար ու փայտ շպրտում են հարսի վրայ, որից շատ անգամ նրա մարմնի զանազան մասերն է կապտում, իսկ շատ անգամ էլ նրա կողերն է ջարդւում, որով կատարելապէս խախտւում է նրա առողջութիւնը։ Դիմադարձութիւն անել, պատասխան տալ, կամ այսպիսի անխիղճ հարուածի մասին որևէ ձայն ու շշուկ հանել, երբէք չի կարող անիսօս և կա-